

**ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԴԻՎԱՆԻ ՎԱՎԵՐԱԳՐԵՐԸ ՄԱՆՈՒԿ
ԲԵՅԻ ԵՎ ԻՐ ԸՆՏԱՆԻՔԻ ՄԱՍԻՆ**

ԿԱՐԻՆԵ ԱՎԵՏՅԱՆ

Բանալի բառեր՝ *Մանուկ Բեյ և ընտանիք, արխիվային վավերագրեր, ռուս-թուրքական հարաբերություններ, Կաթողիկոսական դիվան:*

Մաշտոցի անվան Մատենադարանի Կաթողիկոսական դիվանի և անհատական թողոններում (Ներսես Աշտարակեցու, Ալեքսանդր Երիցյանի, Մսեր Մսերյանցի) կան հազարավոր վավերագրեր, որոնք հայոց պատմության ու մշակույթի դեռևս չուսումնասիրված էջերը լուսաբանող էական նորություններ են պարունակում:

Մանուկ Բեյի կենսագրությունն ու գործունեությունը, թերևս, բավականաչափ ուսումնասիրված է (մխիթարյան միաբան հայր Ղևոնդ Հովնանյան, Մ. Մսերյանց, Հ. Սիրունի), սակայն նրա ընտանիքի պատմության ուսումնասիրությունը ուշադրության չի արժանացել: Մանուկ Բեյի առաջին կենսագիրներից մխիթարեան միաբան հայր Ղևոնդ վարդապետ Հովնանյանը իրավացիորեն գրել է. «Վերջին ժամանակները Ազգերնուս մէջ երևելի ու հայ անուան պարծանք եղող և իբրև հանճարաւոր ու քաջ քաղաքագէտ նաև Լրոպայի տէրութեանց առջև անուն հանող ազգայիններնէս մէկն ալ է բարձրարապատիւ Մանուկ Պէյ Միրզայեան: Բայց սակայն չեմ գիտեր ինչպէս եղած է, որ խիստ քիչ մարդիկ կան՝ որոնք աս հոյակապ ու նշանաւոր անձին վրայ, չըսեմ տեղն ի տեղը, հապա նաև վեր ի վերոյ մ'ալ ծանօթութիւն ունենան. գուցէ նաև գտնուին Ազգին մէջ, գոնէ հեռաւոր տեղեր, անանկ մարդիկ՝ որոնք և ոչ իսկ իր անունը լսած

ըլլան»¹: Ի դեպ, երբ Ղևոնդ վրդ. Հովնանյանը պատրաստվում էր գրել Մանուկ Բեյի կենսագրությունը և այդ նպատակով գրավաճառ Հ. Էնֆիաճյանցի միջոցով դիմել էր Մսեր Մսերյանցին, նա էլ իր հերթին՝ Մուրադ բեյին, վերջինս դժգոհել էր Մսերյանցի տրամադրած տեղեկություններից, համարելով, որ իր հոր կենսագրությունը հրապարակելը դեռ վաղաժամ է²: Մանուկ բեյի՝ տարածաշրջանում ունեցած գործունեության համեմատ էլ բազմաթիվ են վավերագրերը, որոնք սփռված են Հայաստանի, Ռումինիայի, Մոլդովայի, Ռուսաստանի պետական արխիվներում:

1806-1812 թթ. ռուս-թուրքական պատերազմում ռուսական բանակը մի քանի հաղթանակներ է տանում թուրքական բանակի դեմ, որտեղ մեծ դեր ունենում Մանուկ Բեյի ցուցաբերած աջակցությունը: Նրա ծառայությունները բարձր են գնահատվել ռուսական բանակի զորավարներ Բագրատիոնի, Կամենսկու, Կուտուզովի կողմից: Ահա թե ինչ է գրում Բագրատիոնը Մանուկ Բեյի մասին իր զեկուցագրում. «Մանուկ Պեյ՝ գլխաւոր թարգման դրան առանձին և արդիւնաւոր ջանադրութեամբ ի կարևոր և յօգտակարագոյն գործս պետութեան եցոյց ի բարիօք ծառայութեան օգոստափառ կայսեր մերում: Տայր ինձ միշտ զկարևոր խորհուրդս վասն քաղաքացն եղելոց յայն կոյս Դանուբայ և զհամբաւսն, զորս առնոյր յայնմ կողմանէ: Ոչ շատ համարեալ այս օրինակ յատուկ ծառայութիւնսն ետ ևս զմեծամեծ նպաստ երկրին Վալաքիոյ ամենահարկաւոր ի վտանգաւորագոյն ժամանակի առ հոգալոյ զպիտոյս զօրաց կայսեր: Ես պարտ անձին վարկայ ծանուցանել կայսեր և զծառայութիւնսն և զանձնանուիրումն և զարժանաւորութիւն նորա: Սակայն բաց այսմանէ պարտապան եմ յանձն առնել զնա առանձնական պաշտպանութեան և պատուոյ ամենայն

¹ Յովնանեան Հ. Ղևոնդ, 1852, 1:

² ՄՄ, Մսերեանցի թողոն, թղթ. 205, վաւ. 903:

զինուորական և մեծաւորաց, այնպէս և կառավարութեան այսր երկրի, որոյ վասն ետու զայս վկայագիր կնքով և ստորագրութեամբ իմով ի 12 մարտի 1810 Պուքրեշտ»³: Այնուհետև մի քանի տող Բագրատիոնը թվարկում է իր տիտղոսները: Ջորավար Բագրատիոնից հետո նրան փոխարինում է կոմս Կամենսկին, որի հանձնարարությամբ Մանուկ Բեյը գնում է բանակցություններ վարելու թուրքական հրամանատարության հետ, ռուսների պաշարած Ռուսչուկ քաղաքը ռուսներին հանձնելու համար: Այդ և էլի շարունակվող այլ ծառայությունների համար Կամենսկու զեկուցագրի հիման վրա կայսրը նրան շնորհում է Ս. Վլադիմիրի 3-րդ աստիճանի շքանշան, որի մասին է նույն թղթապանակի 2414 նամակ-վավերագիրը:

Ալեքսանդր Առաջին կայսրը նրան շնորհել է իսկական պետական խորհրդականի կոչում: Հայտնի է կայսեր մեկ այլ հրովարտակը, որով «հավանություն հայտնելով նրա մտադրությանը, Բեսարաբիայում մի նոր քաղաք հիմնելու և այնտեղ օտար գաղթականներ բնակեցնելու մասին, խոստանում է ձեռնտու լինել նրա հետագա ձեռնարկումներին»⁴ (Վիեննա, 22/2 - 1815 թ.): Կայսեր օգնության և օժանդակության խոստումը տարածվում էր նաև Մանուկ Բեյի անձնական - ընտանեկան հարցերի վրա ևս. նա բավական արտոնյալ պայմաններում էր գտնվում. օրինակ՝ ստանալով Մանուկ Բեյին ու ընտանիքին Գերմանիայի սահման հասցնելու և նրա ունեցվածքը ապահովելու մասին, Վալաքիայի դեսպանի տեղեկագիրը, պետական խորհրդական կոմս Ռումյանցեվը հավանություն է հայտնում և ավելացնում, թե գրել է նաև Իտալիայի դեսպանին, որպեսզի արդեն ռուսա-

³ ՄՄ, Մսեր. թողոն, թղթ. 209, վա. 2413: Հմմ. Ադամյան 1954, Վավերագրեր ռուս-հայ բարեկամական հարաբերությունների պատմությունից (1809-1811 թթ.):

⁴ ՄՄ, Մսեր. թողոն, թղթ. 209, վա. 2416:

հպատակ Մանուկ Բեյի տեղում մնացած կալվածքին ուշադիր լինեն և տիրություն անեն⁵ (2/7- 1813 թ.): Ըստ 2419 վավերագրի, որ պետական խորհրդական կոմս Կապոդիստրիայի նամակն է Մանուկ Բեյին այն մասին, որ կայսրը հարգելով նրա խնդիրը, կարգադրել է, որ նրա Բեսարաբիայի կալվածքը ազատ լինի զինվոր խնամելու հարկից և այլ պարհակներից, բացի պատերազմական ժամանակաշրջանից: Եվ էլի երկու փաստաթուղթ⁶ 1815, 1817 թթ., որոնցով Մանուկ Բեյին թույլատրվում է ազատ թղթակցություն ունենալ արտասահմանի հետ, պետության համար կարևոր տեղեկություններ ստանալու նպատակով և գործել այնպես, որ թղթակիցները չտուժեն, ու պետությունների միջև գոյություն ունեցող համեմատաբար փխրուն խաղաղությունը չխաթարվի: Նաև պետական խորհրդական կոմս Կապոդիստրիայի նամակը Մանուկ Բեյին, առ այն, որ կայսրը շատ գոհ է մնացել նրա թղթակցությունների միջոցով արտասահմանից ստացված տեղեկություններից⁷:

Արխիվային փաստաթղթերում պահպանվել է Բեսարաբիայի հոգևոր առաջնորդ Ներսես Աշտարակեցու և Մանուկ Բեյի ու նրա ժառանգների մի կողմից, և մյուս կողմից Լազարյանների միջև շարունակվող մտերիմ հարաբերությունների պատկերը, երբ Ներսես Աշտարակեցին հորդորում է Խաչատուր Լազարյանին պաշտպան և նեցուկ լինել իր հանգուցյալ աներոջ՝ Մանուկ Բեյի ընտանիքին, որից Հասան բեյի օգտին 250.000 ռուբլի բռնագանձելու վճիռ է արձակել գավառական դատարանը և որի դեմ այլ հայցեր էլ կան դատարանում⁸, տեղեկացնում է Մուրադ բեյի և պահանջատերերի միջև եղած անհամաձայնության մասին, որ

⁵ ՄՄ, Մսեր. թողոն, թղթ. 209, վա. 2415:

⁶ ՄՄ, Մսեր. թողոն, թղթ. 209, վա. 2417, 2420:

⁷ ՄՄ, Մսեր. թողոն, թղթ. 209, վա. 2420:

⁸ ՄՄ, Ներսես Աշտարակեցու թողոն, թղթ. 167ա, վա. 755, 771, 778:

տևել է մի ամբողջ տարի⁹, կամ հարցնում է, թե կարելի՞ է հարսնության խնդրել նրա քենուն՝ Աննա Էմանուելովնային այրի Աքսինիա Թումանյանցի որդու համար¹⁰, օժում է Հնչեշտի նորակառույց եկեղեցին և անվանում Ս. Մարիամ Աստվածածին, ի պատիվ Մուրադ բեյի մոր՝ Մարիամի. «...ի 4 ամսոյս եկեալ ի Քիչնև եւ ի 5 գնացեալ ի Հնչեստ գիւղն Մանուկ բեյի ի տեսութիւն վեհազնեայ աղայ Խաչատուր Յովակիմեան հարազատի սրբոյ եկեղեցւոյ հայոց և ընտանեաց նորա, օծաք անդէն եւ զեկեղեցին նորակերտեալ ի Մարիամ կենակցէ հանգուցեալ Մանուկ Բեյի նորոգ ի 17 սեպտեմբերի հանգուցելոյ անուանեալ զնա սուրբ Մարիամ Աստուածածին ի 14 ամսոյ յաւուր կիրակէի. եւ ի 17 վերադարձեալ անդրէն ի Քիչնև...»¹¹, կամ գրում է Հնչեշտի Հուսիկ քահանայ Հովհաննիսյանին՝ նահանգապետի պահանջով հանձնարարելով Մուրադ բեյի օժանդակությամբ կազմել 10 տարվա վիճակագրություն՝ Հնչեշտի բնակչության թվի, ամուսնությունների, ծնունդների, եկեղեցիների, քահանաների ու դպիրների, նրանց ունեցած անշարժ գույքի՝ տների, խանութների, հողերի ցուցակ, ինչպես նաև նշել քաղաքացիությունը, սկսած 1820 թվականից¹²:

Մուրադ բեյը հաճախ այցելում էր Ներսես Աշտարակեցուն¹³: Վերջինս 1829 թ. սեպտեմբերի 20-ի նամակով դիմում է Մուրադ բեյին՝ հաղորդելով նահանգապետի դժգոհությունը տարածված ժանտախտի պայմաններում Հնչեշտի ազգաբնակչության հանդեպ Մուրադ բեյի անհոգ, անկարեկից վերաբերմունքից և հույս հայտնում, որ լսածը սխալմունք է ու ինքը պարտավորված է զգում իրեն որպես հայր և

⁹ Նույն տեղում, թղթ. 167ա, վաւ. 973:

¹⁰ Նույն տեղում, թղթ. 167ա, վաւ. 244, 247, 412:

¹¹ Նույն տեղում, թղթ. 166, վաւ. 1225:

¹² Նույն տեղում, թղթ. 167ա, վաւ. 168:

¹³ Նույն տեղում, թղթ. 167ա, վաւ. 111, 272:

«որպէս բարեկամ մտերիմ ձեզ և ամենայն տան հօր ձերոյ և բնաւից ձերոց բարեկամաց՝ յայտնելով ձերում քաջազնութեան զայս ամենայն, յառաջադրեմ ձեզ կատարեալ հարազատութեամբ խորհրդոց իմոց եթէ ոչ միայն այժմ ի սմին պատահման, այլ յամենայն ժամանակս կենաց ձերոց պարտաւոր էք որպէս մարդ եւ որդի մարդոյ, որպէս քրիստոնէայ ... եւ որպէս ժառանգ անդրանիկ նորին մեծանձնութեան առն հռչակաւորի՝ հանգուցեալ Մանուկ բեյի Միրզայեանց, ջանալ ամենայն զօրութեամբ եւ կարողութեամբ մտաց ձերոց գործել միշտ զամենայն զբարիս՝ որք պարտաւորութիւնք են որդւոց ադամայ, որք հարկաւորք են քրիստոնէից եւ որք վայելչականք են մեծանուն հօր որդեութեանց...: Եւ ես ամենայն ջերմեռանդութեամբ հոգւոյ իմոյ եւ կատարեալ բարեկամութեամբ միշտ. եմ եւ մնամ իսկական վերյարգութեամբ այժմ եւ յաւերժ ձերում քաջազնութեան խոնարհ ծառայ արքեպիսկոպոս հայոց Վրաստանու, Բեսարաբիոյ եւ այլոց Ներսէս»¹⁴:

Վավերագրերի ամենաստվար հատվածը, թերևս, Մտերեանցների արխիվն է՝ վավերագրեր, նամակներ, որոնք վերաբերում են հիմնականում Մանուկ Բեյի և նրա ավագ որդու՝ Մուրադ Բեյի բազմակողմանի գործունեությանը, իսկ ընտանիքի մյուս անդամներին անդրադարձը բավական հպանցիկ է: Մանուկ Բեյն ուներ չորս աղջիկ և երկու տղա՝ Մուրատ Մանուկ պեյ և Գրիգոր Մանուկ պեյ: Աղջիկներից մեկը՝ Կատարինեն ամուսնացած էր Խաչատուր Լազարյանի հետ, մյուսի՝ Աննայի համար հարսնախոսության առաջարկը Ներսես Աշտարակեցու միջնորդությամբ 1830 թ. մերժվել էր անչափահաս լինելու պատճառաբանությամբ: Գրիգորի մասին մեզ հայտնի է այն, որ ապրել է Փարիզում, նաև՝ մի թանկարժեք մակագրություն 1830 թվականին հրատա-

¹⁴ Նույն տեղում, թղթ. 167ա, վաւ. 229:

րակված Լազարյան ճեմարանի «Կարգադրությունք Ճեմարանին արևելեան լեզուաց» գրքի տիտղոսաթերթին, որի վրա մակագրված է. «Նուէր իշխան Գրիգոր Մանուկ Բեյից Մայր Աթոռի ճեմարանին»: Գիրքն այժմ Մաշտոցյան Մատենադարանի սեփականությունն է: Նամակագրությունը Մուրադ բեյի և Մսեր Մսերյանցի միջև (1839-1871 թթ.) ներկայացնում է երկու մտերիմ բարեկամների հարաբերություններ, որտեղ մտահոգվում, խորհրդակցում են Լազարյան ճեմարանի, նրա նոր կանոնադրության, տնօրինության և ուսուցչական կազմի, ճեմարանում տեղի ունեցող ապօրինությունների, հայոց լեզվի և կրոնի դասերի ավելացման հարցերի շուրջ, քննարկում են գրքերի հրատարակության, դրամական, նոր դպրոցներ բացելու նպատակահարմարության հարցեր: Մուրադ բեյը տեղեկացնում է, որ մտադրություն ունի դպրոց և դեղատուն հիմնել Քիշնևում կամ Հնչեշտում և հիշեցնում է Մսերյանցին նրա խոստումը այդ դպրոցում ուսուցչապետ լինելու մասին¹⁵: Մյուս նամակում¹⁶ գրում է, թե դպրոցի կառուցման դեմ արգելքներ են հարուցվում և եթե այդպես շարունակվի, կթողնի այդ մտադրությունը և գումարը կհատկացնի մի այլ ազգագուտ ձեռնարկի: Այդ մասին հարցնում է Մսերյանի խորհուրդը: Ի վերջո դպրոցի հարցը մերժվում է¹⁷, իսկ մինչ այդ Մուրադ բեյը հայտնում է, որ Բուխարեստի նոր դպրոցին նվիրել է 1000 «մանջար», խորհուրդ է տալիս Մսերյանցին ուշադրություն դարձնել հայոց պատմության վերաբերյալ գրքերի հրատարակությանը¹⁸, այն բանից հետո, երբ ի թիվս բազմաթիվ գրքերի Մսերյանցից ստացել և կարդացել էր վերջինիս հրատարակած «Ճոսքաղ» ամսագիրը և Ա. Մուրավյովի գիրքը («Армения и

¹⁵ ՄՄ, Մսեր. թողոն., թղթ. 205, վա. 903:

¹⁶ Նույն տեղում, թղթ. 205, վա. 907:

¹⁷ Նույն տեղում, թղթ. 205, վա. 908:

¹⁸ Նույն տեղում, թղթ. 205, վա. 893:

Грузия»): Ինքն էլ նյութապես աջակցում էր նրան, որը լինում էր «ի դէպ ժամանակի» թե՛ գիտական աշխատանքների համար և թե՛ ընդհանրապես:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ադամյան Ա. 1954, Վավերագրեր ոռու-հայ բարեկամական հարաբերությունների պատմությունից (1809-1811 թթ.), Տեղեկագիր, N 9, էջ 95-101:

Յովնանեան հայր Ղևոնդ վարդապետ 1852, Միրզայեան Մանուկ Պէյին վարուց պատմութիւնը, Վիէննա, 91 էջ:

ՄՄ, Մսերեանցների արխիվ, թղթ. 205, վաւ. 903, 907, 908, 209, 893, թղթ. 209, վաւ. 2413, 2414, 2415, 2416, 2417, 2419, 2420:

ՄՄ, Ներսէս Աշտարակեցու արխիվ, թղթ. 166, վաւ. 1225, թղթ. 167ա, վաւ. 111, 168, 229, 244, 247, 272, 412, 755, 771, 778, 973:

Մսերեանց Մ., Միրզայեան Մանուկ Պէյ. Պատմութիւն վարուց նորա, «Փարոս Հայաստանի», Մոսկվա, 1879, տետր Ա., էջ 2-6, 1880, տետր Ա., էջ 2-9, տետր Բ., էջ 51-55, 1881, տետր Ա, էջ 3-6, տետր Բ., էջ 2-8, տետր Գ., էջ 3-6:

Սիրունի Հ. Ճ. 1969, Մանուկ Բեյ Միրզայան՝ իշխան Մոլդովայի, «Լրաբեր հասարակական գիտությունների», N 10, էջ 30-46:

Կարինե Ավետյան - *պ.գ.թ.*, ՀՀ ԳԱԱ
արևելագիտության ինստիտուտ, Քրիստոնյա Արևելքի
բաժին, ավագ գիտաշխատող
avetyan.karine1@gmail.com

ARCHIVES OF THE CATHOLICOSATE CONCERNING MANUK BAY AND HIS FAMILY

Key words: *Manuk bay and Family, archival documents, Russian-Turkish relations, Archives of Catholicosate.*

There are thousands of ratifications among public documents and personal archives regarding Armenian history and culture, especially the pages that haven't been studied, at Catholicosate of the Matenadaran after Mashtots. Numerous documents are kept in the archives of Nerses Ashtaraketsi, Alexander Yeritsyan, Mser Mseryan concerning Manuk Bay and his family.

Karine Avetyan - *PhD, Institute of Oriental Studies,
Department of Christian Orient, Senior Researcher,
avetyan.karine1@gmail.com*